# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գառնի, 041-12-51-56, garnihamaynq@mail.ru

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

**21.02.2023թ.** **գ.Գառնի**

2023 թվականի փետրվարի 21-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական շենքում տեղի ունեցավ «ԱՆԴԵԶԻՏՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի բազալտի հանքավայրի տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ հանրային 1-ին քննարկումը:

Լսումների ընթացքում, որը տեսաձայնանագրվել և ձայնագրվել է, «ԱՆԴԵԶԻՏՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացվել է հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության, նոր աշխատատեղեր ստեղծման, ընկերության կողմից համայնքին, սոցիալական և այլ օժանդակության հարցեր:

«ԱՆԴԵԶԻՏՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները պատասխանեցին Գառնի համայնքի ազդագրի ներկայացուցիչների, համայնքի բնակիչների կողմից բարձրացված մի շարք հարցերի, նշելով նաև, որ ընկերությունը ներդրումային ծրագրերի հետ կապված պատրաստ է նաև քննարկումների:

Ավարտին՝ «ԱՆԴԵԶԻՏՏԲԱԶԱԼՏ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հաստատեց, որ օգտակար հանածոյի իրավունքի տրամադրման դեպքում այդ բոլոր ստանձնած պարտավորությունները կիրականացվեն:

Լսելով վերոգրյալը, մենք՝ ներքոստորագրյալներս կողմ ենք և տալիս ենք մեր համաձայնությունը ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի տարածքում գտնվող «ԱՆԴԵԶԻՏՏԲԱԶԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի բազալտի հանքավայրի տեղամասումում օգտակար հանածոների

արդյունահանման իրավունքի վերաբերյալ աշխատանքներ իրականացնելու համար:

**Լսումների կազմակերպիչ՝** **Լիպարիտ Թադևոսյան**

**Արձանագրող՝** **Համիկ Գրիգորյան**

**«ԱՆԴԵԶԻՏԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության**
**Ներկայացուցիչ՝** **Գուրգեն Հակոբյան**

**ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**